ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 32

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 17հոդվածի 1-ին մասի պահանջով, որոշում եմ

1.Թեղենիք համայնքի ավագանու արտահերթ նիստ հրավիրել 2019թվականի հոկտեմբերի 08-ին ժամը 11oo-ին, հետևյալ օրակարգով

1)Թեղենիք համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 42-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2)Թեղենիք համայնքի 2017-2018թվականների բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները հաստատելու մասին

3)Թեղենիք համայնքի ղեկավարի հաղորդումը 2019թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարողականի մասին

4)Համայնքներիհիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճար մուծելու մասին

5)Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին

6)Թեղենիք համայնքի սեփականություն համարվող ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին

7)Կոտայքի մարզպետարանի կողմից Թեղենիք համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկում մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

20 19 թ. հոկտեմբերի 03
գ.Թեղենիք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 33

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Թեղենիք համայնքի սեփականություն համարվող գույքի ամենամյա պարտադիր գույքագրում անցկացնել և ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1)Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Պետրոսյան, պատասխանատու անձ՝ Գ. Մուրադյան, անդամներ՝ Ա. Գրիգորյան, Մ. Սուքիասյան, Լ. Մխիթարյան

2.Գույքագրման փաստաթղթերը ներկայացնել ավագանու հաստատմանը:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2017թվականի դեկտեմբերի 12-ի ,,Համայնքային սեփականություն համարվող 2018թվականի գույքի պարտադիր գույքագրման և հանձնաժողով ստեղծելու մասին" թիվ 32 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 03
գ.Թեղենիք